Հավելված N 449
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ
1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) բուսաբուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.16-Ղ3-1) **1.2. Ենթակա և հաշվետու է** Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Էկոնոմիկայի նախարարին: **1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ** Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են վարչության բաժինների պետերը: **1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը: **1.5. Աշխատավայրը** Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5:
2. **Պաշտոնի բնութագիրը**
2.1. **Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝** 1. կազմակերպում է հանրապետության բուսաբուծության ոլորտի քաղաքականության մշակման աշխատանքները և դրա առանձին ճյուղերի՝ երկրագործության (դաշտավարության, բանջարաբուծության, բոստանային և տեխնիկական մշակաբույսերի մշակության), պտղաբուծության, խաղողագործության, ծաղկաբուծության, սերմնաբուծության, տնկանյութի արտադրության իրավիճակի վերլուծությունների իրականացման, խնդիրների վերհանման, գնահատումների ու կանխատեսումների իրականացման աշխատանքները, մասնակցում է ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրային ուղղությունների մշակման և միջոցառումների իրականացման գործընթացին, 2. կազմակերպում է վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական

ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքները,

3. կազմակերպում է բուսաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության տրամադրման աշխատանքները,

4. մասնակցում է բուսաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակման, իրականացման և դրանց ընթացքի ուսումնասիրման աշխատանքները,

5. կազմակերպում է գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դիտարկման, գնահատման և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրերի մշակման աշխատանքների, դրանց իրագործման ընթացքում մոնիթորինգի անցկացմանն աջակցելու աշխատանքները,

6. կազմակերպում է բույսերի սորտերի փորձարկման, գրանցման և արտոնագրերի տրամադրման գործընթացին աջակցելու աշխատանքները,

7. կազմակերպում է հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարմանը աջակցելու աշխատանքները,

8. կազմակերպում է սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողների (ապրոբատորների) հավաստագրմանն աջակցելու աշխատանքները,

9. կազմակերպում է օրգանական գյուղատնտեսության ոլորտում առաջնային խնդիրների բացահայտման աշխատանքների իրականացումը, մասնակցում է պետական աջակցության ծրագրերի մշակմանը և մոնիթորինգի իրականացմանը,

10. կազմակերպում է օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հաշվառման գրանցամատյանի վարման աշխատանքները,

11. կազմակերպում է հանրապետությունում բուսաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսման, փաստացի տվյալների վերլուծության իրականացման աշխատանքները,

12. կազմակերպում է այլ գերատեսչությունների կողմից մշակված՝ բուսաբուծության բնագավառին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրման աշխատանքները,

13. մասնակցում է բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի մշակման ու քննարկման գործընթացներին,

14. կազմակերպում է ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների, բողոքների քննարկման և խնդիրների լուծման գոնրծընթացն ապահովող աշխատանքները,

15. կազմակերպում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող

տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցությանն ուղղված աշխատանքների իրականացումը,

16. կազմակերպում է վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման աշխատանքների իրականացումը:

Իրավունքները՝

- տեղական ինքնակառավարման և շահագրգիռ այլ մարմիններից պահանջել համապատասխան տեղեկատվություն և առաջարկություններ հանրապետության բուսաբուծության ոլորտի առանձին ճյուղերի՝ երկրագործության (դաշտավարության, բանջարաբուծության, բոստանային և տեխնիկական մշակաբույսերի մշակության), պտղաբուծության, խաղողագործության, ծաղկաբուծության, սերմնաբուծության, տնկանյութի արտադրության իրավիճակի մասին,
- նախարարության ստորաբաժանումներից կամ այլ մարմիններից ստանալ կարծիքներ Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի վերաբերյալ,
- շահագրգիռ մարմիններից ստանալ տեղեկատվություն բուսաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացի վերաբերյալ,
- բուսաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտներից ստանալ համապատասխան տեղեկատվություն և տվյալներ՝ պետական աջակցության ծրագրերի մշակման համար,
- տեղական ինքնակառավարման մարմիններից և ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտներից ստանալ համապատասխան տվյալներ գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դիտարկման, գնահատման և բերրիության բարձրացման միջոցառումների ընթացքի վերաբերյալ,
- տնտեսվարողներից պահանջել հաշվետվություն բույսերի սորտերի փորձարկման, գրանցման և արտոնագրերի տրամադրման աշխատանքների վերաբերյալ,
- սերմ ներկրողներից (ԱՁ և իրավաբանական անձինք) պահանջել համապատասխան տեղեկություններ հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գործընթացի նպատակով,
- Նախարարության համակարգում բուսաբուծության ոլորտին առնչվող ենթակա մարմնից պահանջել տեղեկատվություն սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողների (ապրոբատորների) հավաստագրման գործընթացի վերաբերյալ,
- շահագրգիռ մարմիններից ստանալ առաջարկություններ օրգանական գյուղատնտեսության ոլորտում առաջնային խնդիրների լուծման, պետական աջակցության ծրագրերի մշակման համար, տեղեկատվություն՝ օրգանական

գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հաշվառման վերաբերյալ,

- շահագրգիռ մարմիններից պահանջել տեղեկատվություն հանրապետությունում բուսաբուծական արտադրանքի ծավալների վերաբերյալ,
- ստանալ տեղեկատվություն այլ գերատեսչությունների կողմից մշակված բուսաբուծության բնագավառին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի վերաբերյալ,
- բուսաբուծության բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի քննարկման և մշակման ժամանակ հանդես գալ առաջարկություններով կամ կարծիքով,
- հրավիրել խորհրդակցություններ, քննարկումներ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությամբ, հանդես գալ ոլորտի կանոնակարգմանն ուղղված նախաձեռնություններով, ելույթներով,
- մասնակցել տեղական և միջազգային կառույցներում բուսաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը:

Պարտականությունները՝

- վերահսկել հանրապետության բուսաբուծության ոլորտի, դրա առանձին ճյուղերում արտադրության իրավիճակի վերլուծությունների կատարման, խնդիրների վերհանման, գնահատումների ու կանխատեսումների իրականացման և քաղաքականության մշակման գործընթացը,
- հետևել Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներին, ինչպես նաև՝ դրանց և ուղեցույցների մշակման վերաբերյալ տալ մեթոդական պարզաբանումներ.
- վերահսկել բուսաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացի վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծման աշխատանքները, ներկայացնել առաջարկություններ դրանց կիրառման վերաբերյալ,
- բուսաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերը ներկայացնել շահագրգիռ մարմիններին կարծիքի, հետևել և ուսումնասիրել ծրագրերի իրականացման ընթացքը,
- վերահսկել գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դիտարկման, գնահատման և բերրիության բարձրացման միջոցառումների վերաբերյալ ստացված տվյալների ամփոփման և դրանց հիման վրա ծրագրերի մշակման գործընթացը.

- հետևել բույսերի սորտերի փորձարկման, գրանցման և արտոնագրերի տրամադրման վերաբերյալ հաշտվետվությունների հավաքագրման, տվյալների ամփոփման գործընթացին,
- հսկել հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման գործընթացը.
- հետևել սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողների (ապրոբատորների) հավաստագրման գործընթացին, ստացված տեղեկատվության հիման վրա մշակել համապատասխան մեխանիզմներ ոլորտի կանոնակարգման համար.
- վերահսկել ստացված տեղեկատվության հիման վրա օրգանական գյուղատնտեսության ոլորտում առաջնային խնդիրների բացահայտման, պետական աջակցության ծրագրերի մշակման և ընթացիկ մոնիթորինգին մասնակցելու աշխատանքների ընթացքը,
- վերահսկել օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հաշվառման գրանցամատյանի վարման աշխատանքները,
- հետևել հանրապետությունում բուսաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսման, փաստացի տվյալների վերլուծման աշխատանքների ընթացքին,
- ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ, կարծիքներ այլ գերատեսչությունների կողմից մշակված բուսաբուծության բնագավառին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի վերաբերյալ,
- վերահսկել բուսաբուծության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրերի և տարեկան բյուջետային հայտերի մշակման, պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ ստացված ֆինանսական տվյալների ստացման, ամփոփման, վերլուծությունների իրականացման և տեղեկանքների պատրաստման գործընթացը:
- քննարկել ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների վերաբերյալ հարցերը, բարձրացված հարցերի լուծման համար տալ առաջարկություններ,
- ուսումնասիրել, ներկայացնել կարծիք կամ առաջարկ տեղական և միջազգային կառույցներում բուսաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն
2	**Ոլորտ**	Գյուղատնտեսական գիտություններ
3	**Ենթաոլորտ**	Ագրոնոմիա և անասնաբուծություն
4	**Մասնագիտություն**	Ագրոնոմիա

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: